ISSN 1829–1988

ՈՍԿԵ ԴԻՎԱՆ

ՀԵՔԻԱԹԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՊՐԱԿ 4 • 2012–2013

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Կորած գնում են հեռու.
Արևը վառ,
Ճամփեն երկար,
Ոչ աղբյուր կա, ոչ առու:

Հովհ. Թումանյան,
«Գառնիկ ախպեր»

Ախձրև էկեր էր. տավրու պճեղներու տեղ ջուր էր գոլի:
– Քուրի՛կ, ծարավ մեռա, իդա գմշու պճեղի տեղաց ջուր խմի՞մ:
–Չէ, ախպեր, մը խըմի, կէղնիս գմեշ: Կէրթան, կէրթան՝ տղեն գառան պճեղի տեղ ջուր կը տեսնա. էլ քրոջ իմաց չի տա, կը գաբի վրեն, կը խմե...

«Գառնիկ ախպոր հեքիաթ»
(Մուշ-Բուլանըխ)

...կէղնի մեյ խատ բաշ գյառ, մաելեն կենի քյուրուչ իտև կէրթա: Քյորն ի, որ կտիանա, թե ուր ախպեր էլավ գյառ, կկզվի գյետին, տաստեմ խոտ կքյաշի կպռնի ծեռ, մեյ տեխեն կուլա, մեյ տեխեն խոտ կուտա ախպոր պերան, կէրթա:

«Երեմեա թակավոր»
(Վասպուրական)

Թագավորը սիրուն աղջկան նստեցնում է նժույգի գավակին, տանում իր դղյակ: Մեծ ու ճոխ հարսանիք է անում ու որբին դարձնում թագուհի...

Գրիմ եղբայրներ, «Քույր ու եղբայր»

Թագավորի պալատումը մի պառավ կնիկ կար, որ նրա աղաքին քոճուհյուն էր անում: Հարսանիքից եդը... աղջկա շորերը հանում ա, որ լեղացնի՝ բռթում ա, քցում ծովը:

«Գառնիկ-աղպեր» (Վաղարշապատ)

ԺամՀար, քու ժամը ձենես.
Քու անահուն Աստվածը սիրես.
Էթաս, թաքավորի տղին ասես.
Դանակ չսրի, ջուրը չդնի,
Իմ գառնիկ ախպոր վզին չդնի:

«Ախպեր գառներ» (Ջաֆարապատ)

«Հավաքվեցեք, հավաքվեցեք, ծառանե՛ր,
Եվ ձգեցեք իմ մետաքսյա ուռկաններ»:
Ծառանները վազեցին, ուռկանները ձգեցին և Վարդուհուն հանեցին...

«Վարդուհին ու Ցոլակը»

Թաքաուրի կնիկը պատմում է մարթուն իր գլխին անց կացածը, ու էն էլ, թէ էն օխչրնիրը իր աղբրտիքն ին ու Աածու հրամանքով էն օխչրնիրը դառնում ին էլի մարթ ու իրանց քվիր հիդ ապրում ու վառաբանումին տալի Աածուն:

«Օխտն աղբէրն ու մէ քուրը» (Թիֆլիս)

Հանդեսը հրատարակում է Հովհ. Թումանյանի թանգարանի հեքիաթագիտության բաժինը և *Fabula armeniaca* ծրագիրը՝ համագործակցությամբ Երևանի պետական համալսարանի:

Նյութերը տպագրվում են Հովհ. Թումանյանի թանգարանի և Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդների երաշխավորությամբ:

[redacted] հեղինակ և գլխավոր խմբագիր՝ **Ալվարդ Ջիվանյան**
[redacted] խորհուրդ՝ **Նարինե Թուխիկյան**
Կարին Բեկ
Ելենա Կարաբեգովա
Նելլի Խաչատուրյան
Նինա Հայրապետյան
Գոհար Մելիքյան
Սոնա Սեֆերյան
Անահիտ Վարդանյան
Նվարդ Վարդանյան
Գիտական խորհրդատու՝ **Սարգիս Հարությունյան**

Շապիկին՝ **Վարդգես Սուրենյանց «Գառնիկ ախպեր», 1906**

Editor: **Alvard Jivanyan**
Editorial board: **Narine Toukhikian**
Karine Bec
Elena Karabegova
Nelli Khachaturian
Nina Hayrapetian
Gohar Melikian
Sona Seferian
Anahit Vardanian
Nvard Vardanian
Research consultant: **Sargis Harutyunian**

Cover illustration: **Vardges Surenyants "Brother Lamb", 1906**

ISSN 1829–1988

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թամար Հայրապետյան
ՆՎԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԾԵՍԸ ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ԱՆՏԱՌՈՒՄ
(ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ) 7

Անի Եղիազարյան
«ԼԵՋՈՒՆ ԿՏՐԱԾ ԾԻՏԻԿԸ» ՁԱՊՈՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ
ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ 14

Елена Карабегова
МОТИВЫ ОПТИКИ И СТЕКЛА В СКАЗКАХ Э.Т. А. ГОФМАНА
И ОСОБЕННОСТИ ИХ ПЕРЕВОДА НА РУССКИЙ ЯЗЫК 20

Անահիտ Վարդանյան
ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ 29

Нелли Хачатурян
АРМЯНСКАЯ НАРОДНАЯ СКАЗКА ГЛАЗАМИ
ИНОКУЛЬТУРНОГО ЧИТАТЕЛЯ 35

Նվարդ Խ. Վարդանյան
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՍԻՄՎՈԼԻԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՈՒՄ 46

Թամար Հայրապետյան
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՂԱՅԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ 54

Гоар Меликян
НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СЮЖЕТНО–МОТИВНЫХ ВАРИАНТОВ
СКАЗКИ «ЗОЛУШКА» 62

Ալվարդ Ջիվանյան
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ ՈՐՊԵՍ ՏԵՔՍՏ 76

Եվա Զաքարյան
ԵՂՆԻԿ ԱՂՋԿԱ ՄՈՏԻՎԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 81

Гаяне Карапетян
ОБРАЗ ЛЕСА В ПРОИЗВЕДЕНИИ КЛАЙВА СТЕЙПЛЗА ЛЬЮИСА
«ХРОНИКИ НАРНИИ» 90

Անահ Հակոբյան
ԱՆՏՈՒԱՆ ԴԸ ՍԵՆՏ–ԷՔՋՅՈՒՊԵՐԻԻ «ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆԸ» ՎԻՊԱԿԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԸՍՏ ՕԲՅԵԿՏԻՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 97

Սոնա Սեֆերյան
ԵՐԵՔ ՀԵՔԻԱԹ – ԵՐԵՔ ԽՆՁՈՐ 109

Թամար Հայրապետյան

ՆՎԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԾԵՍԸ ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ԱՆՏԱՌՈՒՄ (ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Հայ ժողովրդական հեքիաթներում անտառը փորձությունների հաղթահարման գաղտնագիտական վայր է, որտեղ տարիքային մի խմբից մյուսն են անցնում նվիրագործյալ հերոսները: Անտառը տանում է դեպի ենթագիտակցության ու անշարժության «անդուռ–անպատուհան», «անմուտք–անելք» մի աշխարհ. «Պուճուր ախպերը քյինից, քյինից, անց կացավ յաբանա չոլեր, քոլեր, անց կացավ կյուղու կազանավ լիքը ծըմակնի, ծորեր, քոլեր, վըերչը հըսավ մին հենց վըեղի, վըեր ռանգյը կյարմուր ար: Էտ կյարմուր վըեղավը քյինից, քյինից հըսավ մին մըեծ ամարաթի, վըեր վըեչ տոռնը օներ, վըեչ էլ ակուշկա» (ՀԺՀ V 1966, 86):

Անտառում պատճառահետևանքային կապերը խզված են. ոչխարի առջև միս է դրված, գայլի դիմաց՝ խոտ, դռան մի փեղկը փակ է, մյուսը՝ բաց: Ճգնավորը (տարբերակներում՝ ծերունին) հերոսին հուշում է. «Պիտի վերցես միս դնես գելու առջև, խոտը՝ գառու առջև: Կ'ընցնես կ'երթաս, կը հասնես ճոչ դուռ մը, մեկ փեղկը փակ, մեկ փեղկը բաց. փակ փեղկը պիտի բանաս, բացը՝ փակես» (Սրվանձտյանց 1978, 216, ՀԺՀ III, 1962, 302):

Նվիրագործյալ տղային է վիճակված հնարավորությունը դարձնել իրականություն, քաոսը հաղթահարել, երևույթներին ու գործողություններին տրամաբանություն հաղորդել, անշարժությունը դնել շարժման մեջ, ոչ թե քարանալ և խտացնել անտառի թանձր խավարը, այլ նպաստել կյանքի մշտական շրջապտույտին ու տիեզերածնության «առասպելի» կրկնությանը, որովհետև «ոչինչ չի կարող երկար գոյատևել, եթե այն «շնչավորված» չէ զոհաբերությամբ և օժտված չէ «հոգով»» (Элиаде 1998: 35–36):

Հայ ժողովրդի բանահյուսության մեջ տարածված է եղել «Հազարան բլբուլ» անվամբ (նաև այլ անուններով) մի հեքիաթախումբ, որի՝ Հայաստանի պատմաազգագրական տարբեր շրջաններից գրառած ինը տարբերակների (ՀԺՀ I 1959, 27–48; III 1962, 299–309; IV 1963, 404–407; V 1966, 83–99; VI 1973, 628–632; XI 1980,121–130; ՀԱԲ 15 1983, 41–42; ՀԱԲ 19 1999, 78–80; Սրվանձտյանց 1978, 214–218) դիպաշարը հայտնի է նաև հեքիաթների միջազգային ժառանգությունից և համապատասխանում է Աարնե–Թոմփսոն–Ութերի համացույցի «Ժողովրդական հեքիաթների տիպերի» (Uther 2011:195) ATU 550 թվահամարին և առնչվում է հեքիաթային անտառի խնդրին: Թագավորական այգուն (եկեղեցուն) պակասում է Հազարան բլբուլը: Թագավորի երեք տղաները գնում են Հազարան բլբուլը (վիշապի հարստությունը, դևի ոսկիները) բերելու: Եղեգի անտառում՝ երեք ճանապարհների խաչմերուկում, եղբայրները հանդիպում են ծերունուն, որը տեղեկացնում է ճանապարհներից մեկի կործանարար լինելու մասին: Հերոսը՝ փոքր եղբայրը, ընտրում է վտանգավոր ճանապարհը, հաղթահարում բազում փորձություններ, հաղթում դևին, ձեռք բերում բլբուլը (գանձերը): Նա ազատում է (գտնում է) եղբայրներին: Եղբայրները հերոսին թողնում են ջրհորում (տարբերակներում՝

կուրացնում են), վերցնում են բլբուլը (գանձերը) և աղջիկներին ու ներկայանում թագավորին՝ իբրև դժվարին առաջադրանքը կատարողներ, սակայն բլբուլը չի խոսում: Ճշմարտությունը բացահայտվում է, բլբուլը երգում է:

«Ծաղկած բախչան» (ՀԺՀ V 1966, 83–99) հեքիաթում «Թաքավերը մաթ մնաց, կըլոխը շոռ տըվավ, օզից, թա եր ընգնի՞: Մին էլ օշը կըլոխը հըվաքից, ասից.– Դե վեր տու իմ տըղաս ըս, եք զառ բուլբուլը խոսիլ, երքել տո, վըեր մըեր բախչան կընանչի: Տըղան քյինաց էն օթախը, ըշտեղ ղուշն ար, ընդրան ղափազիցը հանից, կլոխ տըվավ ընդրան, խընթրից, վըեր երքի: Զառ բուլբուլը թըփհարից թևերը, օրախ-օրախ ըսկսից երք ասիլը... Սաղ աշխարքըս էտ օրվանից կընանչից, ծաղկից, ժողովուրթը ուրխացավ...» (Նույն տեղում, 98):

Հեքիաթի կրտսեր հերոսը բոլոր կարգի արգելքները պետք է հաղթահարի նպատակասլացությամբ, մարդուն սարսափեցնող պայմանականությունների հաղթահարմամբ և իրերի դրությունը դրականորեն փոփոխելու ընդունակությամբ: Հերոսի համարձակությունը, չնայած նախնական արգելքին, բխում է օտար, անծանոթ աշխարհներն ու երևույթները մշակութային առումով յուրացնելու, փնտրված առարկան ձեռք բերելու ու տարածական տեղափոխման ենթարկելու՝ մարդու բնական պահանջմունքներից: Անտառում՝ երեք ճանապարհների խաչմերուկում, փոքր տղան նախընտրում է դժվարին՝ «գեղան-գյալմազի» (ՀԺՀ I 1959, 29) (գնացող ետ չդարձողի) ճամփան՝ «անցնելով «հալա» մարթի վըենը չի կոխած տեղերով, հալա մարթի ծըղեն լըսած վեչ սարերավ» (ՀԺՀ V 1966, 85): Հեքիաթի հերոսի՝ վտանգին ընդառաջ գնալու պատրաստակամությունը համապատասխանում է պատումը հյուսվելու ժամանակ իրերի այնպիսի դրությանը, երբ հրաշապատում հեքիաթների դիպաշարերը իրենց ֆանտաստիկ-իռացիոնալ բնույթով համապատասխանում էին կրտսեր հերոսի ենթագիտակցական հուզաշխարհին, ում ծավալած գործողությունները տրամաբանորեն հաջորդում են միմյանց՝ իբրև հստակորեն սահմանազատված և փոխշաղկապված գործառույթներ:

Հերոսը ճանապարհվում է՝ չունենալով ոչ մի հաստատուն գիտելիք իր անցնելիք ճանապարհի և անակնկալ փորձությունների մասին:

«Ավճի Շաբուրի տղեն» (ՀԺՀ IV 1963, 27–45) հեքիաթում թագավորը հերոսի առջև խնդիր է դնում.

— «Պտի էրթաս ընձի համար մեկ Հազարան բյուլբյուլմ ճարես, բերես, թազա շինածս պալատի մեջը պահեմ, որ իմ պալատիս թայը էլ աշխարհքի երեսը չը գտնվի:

— Հազարան բյուլբյուլ ես ո՞րտեղից գտնիմ բերեմ, թագավորն ապրած կենա:

— Որտեղից գուզես գտի բեր, էդ քու բանդ է, չը բերես գլուխդ կը զարկեմ,– ըսավ թագավորը» (Նույն տեղում, 33):

«Աղվեսը» (ՀԺՀ V 1966, 72–77) հեքիաթում ծերունին հուշում է, որ «վըեսկե ղուշը էն ա օխտը սարի քըմակի» (Նույն տեղում, 72):

Անծանոթ աշխարհների ու առարկաների յուրացումը ուղեկցվում է մշակութային հերոսի գիտակցության մեջ կատարվող խոր փոփոխություններով: Նա տեսնում է ավելին, քան ողջ հանրույթը, որը գերադասում է խաղաղ, անվրդով կենսընթաց: Հենց դրանով է մշակութային հերոսի արարքը դառնում խիզախում (Мелетинский 1988: 25–28):

Հազարան բլբուլին հսկում են վիշապները: Տղան թաքուն է սողոսկում դեպի բլբուլը, որպեսզի շրջակա աշխարհը՝ ծառերը, քարերը, խոտերն ու կենդանիները չնկատեն և աղաղակելով չտեղեկացնեն բլբուլի պահապաններին:

Հետապնդումներից ազատվելու համար հերոսը պիտի ետ չնայի, հակառակ դեպքում, առասպելաբանական ու բանահյուսական մշակույթում ընդունված պատկերացումների համաձայն, կընկնի չար ոգիների ազդեցության տակ և կքարանա: Բայց շրջակա աշխարհին ու կենդանիները, ի նշան երախտագիտության, թողնում են, որ տղան անարգել փախցնի բլբուլին: Խոսող բլբուլը բերելու ճանապարհին քարանում են նաև Ղ. Աղայանի թարգմանած արաբական հեքիաթի արքայորդիները՝ Ֆարիդն ու Ֆարուզը, որոնք նույնպես վերակենդանանում են իմաստուն ծերունու շնորհիվ (Աղայան 1962, 381–382):

Եվ երբ՝ փորձությունների հաղթահարման ճանապարհին, մշակութային հերոսի ճակատագիրը թվում է ավելի քան անհուսալի, այդ նույն հերոսը, գերազանցելով ինքն իրեն, շրջադարձ է կատարում հանրույթի կյանքում և գիտակցության մեջ: Նա յուրացնում է մինչև իրեն կատարվածը, ստեղծում նորը և այդ նորը ամեն գնով պաշտպանում հնից: Ավելին՝ հենց այդ հերոսի շնորհիվ է թռչող գորգը, ձգումը, թռչունը («Չեչել–Քերքեզ ղուշը») ժամանակի ընթացքում դառնում սովորական ավիաերթուղային փոխադրամիջոց, իսկ ոչ կենսաբանական ճանապարհով՝ ջրից, մարջանից, նռան հատիկից, ուլունքից ծնված մարդը՝ ժամանակակից գիտության մարդաստեղծման (կլոնավորման) նախատիպ:

Անտառը փակ տարածություն է, անդրաշխարհ, որտեղ հերոսը փորձություններ է հաղթահարում՝ աշխարհից ու ժամանակից կտրված: Հեքիաթային անտառը մանրամասնորեն չի նկարագրվում: Այն թավախիտ, անանցանելի մի վայր է, և ճանապարհը դեպի այնկողմնային աշխարհ՝ անհայտ թագավորություն, անցնում է անտառի միջով (Пропп 1946: 44–45): «Շահ–Մարան» (ՀԺՀ XIII 1985, 212–222) հեքիաթում ընկերները ցախավաճառ հերոսին թողնում են փակ տարածություն խորհրդանշող, գետափին գտնված մեղրի կարասի մեջ, ինչն էլ ազդարարում է չափահաս դարձած տղայի փորձությունների հաղթահարման սկիզբը: Հերոսը ջարդում է կարասի տակը, ընկնում ջուրն ու հասնում մի պալատի, հանդիպում 3 օձերի, որոնցից մեկը, հանելով շապիկը, դառնում է չքնաղ աղջիկ: Վերոհիշյալ հեքիաթում Մուրադը գնում է ոչ թե Հազարան բլբուլի, այլ հոր հավանած աղջկա ետևից, փորձությունների է ենթարկվում նրան գտնելու համար:

Մեզ հետաքրքրող «Հազարան բլբուլ» հեքիաթախմբում օտար աշխարհներից բերված գեղեցկուհու արյունով թագավորի կուրությունը (ծակ աչքը) բուժելու մոտիվը բացակայում է, սակայն նույն գեղեցկուհու արյունը սպեղանի է հիվանդ թագավորի համար: Վերոնշյալ «Շահ–Մարան» հեքիաթում, թագավորի հիվանդությունը բուժվում է անդրաշխարհից բերված կնոջ արյունով, ով ներկայանում է օձի կերպարանքով՝ խորհրդանշելով հողը և այն արյունով ձեռք բերելու այլաբանությունը.«Շահ–Մարան կանչեց.– Տղա, կանի էրկու խոսք կա, քըզի կըսիմ, էլմա գնա: Տղա,– ըսավ,– դու կէրթաս ձըր թագավոր ցավոտ ա, իմ արուն ա ընդոր տեխ» (ՀԺՀ XIII 1985, 221):

Անծանոթ աշխարհներից սպասվող վտանգն արդեն իսկ տարածքի մշակութային յուրացման մարտահրավեր է, որն ընդունում է «Հազարան բլբուլ» հեքիաթի նվիրագործյալը, ով շատ գծերով ընդհանրություններ է դրսևորում «Սասնա ծռեր» դյուցազնավեպի հերոսների հետ: Թագավորի կրտսեր որդուն հայրն ու եղբայրները չեն ճանաչում, քանի որ փորձություններ հաղթահարելուց հետո հեքիաթի հերոսը հզորացել էր, կարմիր, սպիտակ, սև դևերի կերակրաբաժնով էր սնվել, ֆիզիկապես կոփվել, նրանց հաղթել մենամարտում, ոտք դրել մինչ այդ անծանոթ՝ կարմիր, սպիտակ և սև հողերի վրա, յուրացրել անհաղթահարելի թվացող օտար տարածքների մարդկային և բնական ռեսուրսները (երեք գեղեցկուհիները

համարժեք են գրավյալ տարածքների բնակչության, իսկ վիշապի ու դևի ոսկիները այդ նույն տարածքների հարստության՝ մաս-ամբողջի բանահյուսական հարաբերակցությանը), որոնք էլ յուրաքանչյուր պատերազմական իրադրության մեջ հաղթող կողմին բաժին են հասնում իբրև ռազմավար:

Հայկական մի խումբ հեքիաթներում (ATU 590), որոնք կրում են «Արքայազն ու ձեռքի կապերը» վերտառությունը, մահամերձ թագավորը, փորձելով կանխել որդիների՝ արգելված, չստուգված տեղ գնալու գայթակղությունը և պատուհասվելու հնարավոր վտանգը, նրանց խստորեն պատվիրում է սև կամ նշված սարը որսի կամ պանդխտության չգնալ (ՀԺՀ VII 1979, 83–87; IX 1968, 347–360; X 1967, 83–88, XV 1998, 142–152; Սրվանձտյանց 1978, 204–211): Իսկ տրամագծորեն հակառակ պահանջ առաջադրող մեկ այլ խումբ հեքիաթներում, որոնք կրում են «Հազարան բլբուլ» անունը, թագավոր հայրը, ընդհակառակը, պահանջում է որդիներից իր չորացած այգու (տարբերակներում՝ շքեղ պալատի կամ եկեղեցու) համար օտար, անծանոթ աշխարհներից բերել կյանք ու կենդանություն պարգևող Հազարան բլբուլը: Սակայն երկու հեքիաթախմբերում էլ, անկախ պահանջից, թագավորի որդիները աներկբա ձեռնոց են նետում անծանոթ աշխարհների մշակութային յուրացման արհավիրքներին և հոր մահից հետո հստակորեն որոշում են. «Քյինական ըմ տըեսնամ էտ սարումը հիմնչ կա վըեր մեր հար ասալ ա քյինաք վուչ» (ՀԺՀ VII 1979, 83), կամ «Լաճ ոսյաթ-մոսյաթ (կտակ-մտակ) ականջ չանե. զձին կը հեծնա, կեհա Սևսար նեճիր (որսի) (Սրվանձտյանց 1978, 204): Թագավորի կրտսեր որդին հաղթում է երեք գլխանի կարմիր դևին, յոթ գլխանի սպիտակ դևին, քառասուն գլխանի սև դևին և ոտք է դնում մինչ այդ անծանոթ՝ կարմիր, սպիտակ և սև հողերի վրա:

Հայկական մի խումբ հեքիաթներում ծեր ու կույր թագավորը (հայրը) որդիներին ուղարկում է հեռու, անծանոթ աշխարհներ՝ բերելու իր աչքերի բուժման դեղը՝ մի բուռ հողը, որին իր և իր ձիու ոտքերը չեն դիպել (ՀԺՀ I 1959, 49–61; III 1962, 274–282; IV 1963, էջ 46–63; V 1966, էջ 100–105; VIII 1977, 86–90; XII 1984, 280–296, 311–318; ՀԱԲ 19 1999, 48–49; 21 2000, 25–34; ԱՀ IX 1902, 144–159):

Չտրորված հողով թագավորի կուրության բուժումը իրավամբ կապվում է վերջինիս՝ նոր հողեր նվաճելու, «աչքը հողով կշտացնելու» և տերության սահմաններն ընդարձակելու հավիտենական մոլուցքի հետ (Զաքարյան 2011, 155–156): Մեր քննարկած երկու հեքիաթախմբերում էլ թագավորը կույր չէ և վերոնշյալ նոր տարածքներ նվաճելու մշակութային մոտիվն ավելի քան ծպտված է: Թավ անտառում ոչխարին ու գայլին բարի ծառայություն մատուցելով, ժամանակն իր հունի մեջ դնելով՝ հերոսը պիտի վերադառնա այսրաշխարհ: Այս ճանապարհին նրան նույնպես փորձություններ են սպասվում. հերոսը կորցնում է տեսողությունը (ի դեպ, նրան կուրացնում են մեծ և միջնեկ եղբայրները, որոնց սրտով չէին փոքրի հաջողությունները): Սակայն այստեղ էլ կուրանում է երեք ճանապարհների խաչմերուկում անհայտի ուղին բռնած, անծանոթ աշխարհներ տեսնելու և այնտեղից անսովոր առարկա (թռչուն) բերելու առաքելությունն իր ուսերին առած մշակութային հերոսը, ում տեսողությունը վերականգնվում է բազում փորձություններ հաղթահարելուց, արյունակիցների խարդախություններից տուժվելուց և տերության մեջ ծագած անկարգությունները շտկելուց հետո:

Նվիրագործյալը պետք է ընկալի, վերամշակի և յուրացնի իր ստացած ողջ տեղեկատվությունը և ապա համապատասխան որոշումներ ընդունի: Չէ՞ որ հանրույթի կատարելության համար անհրաժեշտ է ծիսական մաքրագործում, կորուսյալ արդարության վերականգնում: Եվ ահա հեքիաթի հերոսը յուրօրինակ դատավարություն իրականացնելու նպատակով թագավորից խնդրում է երեք օրով

իշխանությունն իրեն հանձնելու իրավունք, որպեսզի բացահայտի եղբայրներից հանիրավի պատուհասվելու, իր հարսնացուի թաթմանն ու կոշիկն իբրև օտար աշխարհից բերված իրեղեն ապացույց ներկայացնելու մանրամասները:

Եվ մինչև հերոսն ամբողջությամբ ապաքինված չի ներկայանում հանրությանը, բլբուլը չի երգում, և այգին չի կանաչում: Բանահյուսական մշակույթում տեսողության կորուստը ընկալվում է իբրև մարդու միկրոտիեզերքի հավասարակշռության խախտում: Եվ քանի դեռ մարդը չի առողջանում, չի վերստանում իր նախնական տեսողությունն ու առավել կայունացած կարգավիճակը, այգին նույնպես, իբրև բնության մի մասնիկ, չի կանաչում, բերք ու բարիք չի տալիս, և չի երգում նաև ոչ պակաս բնության մասնիկը համարվող հավքը՝ Հազարան բլբուլը:

Հովհ. Թումանյանը առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել «Հազարան բլբուլի» նկատմամբ: «Հազարան բլբուլը» Թումանյանի վաղ սկսած և չավարտած ամենախոշոր երկերից մեկն է: Թումանյանն իր ձեռքի տակ ունեցել է բազմաթիվ տարբերակներ (մոտ 60):

Հետաքրքիր է նկատել, որ չափածո մշակումների մեջ Հովհ. Թումանյանը նույնպես խիստ կարևորել է մշակութային հերոսի գործունեությունը.

— Ո՞վ հավիտյան **կույր**, մոլորված ու **միշտ խաբված** դուք մարդիկ
Հեշտ է թվում **միշտ ցանկալին** ու սիրածը միշտ մոտիկ
Հեշտ է միայն ցընորքի մեջ, մոտիկ՝ սըրտին **տենչալի**,
Բայց չի կարող ոտքը հասնել, ուր որ սիրտն է **ման գալիս** (Թումանյան 1940, 423) (ընդգծումները Հովհ. Թումանյանինն են):

Ինչպես դիպաշարի ժողովրդական տարբերակներում, այնպես էլ Հովհ. Թումանյանի մշակման մեջ ծերուկը հանդուգն հերոսին հորդորում է ապրել հանգիստ ու անխռով՝ «նման խելոք շատերին», սակայն վերջինս առաքելություն ունի ոչ միայն Հազարան բլբուլը ձեռք բերելու, այլև աշխարհը կատարյալ դարձնելու, մարդուն վերադարձնելու կորցրած «պատկերն իր վերին» (Թումանյան 1940, 423): «Հազարան բլբուլ կամ Ալո–Դինոյի նաղլը» (ՀԺՀ, հ. I 1959, 27–48) հեքիաթում բլբուլը բերող տղան կնոջն ասում է. «Ա՞ կնիկ, վե կաց, էթանք մեր հայրենիքը: Մեր թաքավորութունը խանգարված ա, սաբաբ՝ էս ղուշը» (ՀԺՀ I 1959, 36):

Հովհ. Թումանյանի կարծիքով այգին չորացել է ոչ միայն բլբուլի պակասից, այլև երբեմնի «քնքույշ ու բանական մարդու» կրած որակական փոփոխությունից: Հեքիաթի որոշ տարբերակներում այգին չորանում է ծերունու անեծքով, քանի որ ժլատ թագավորը (տարբերակներում՝ այգեպանը) բերք ու բարիքով լի իր այգուց հրաժարվում է միրգ տալ աղքատ ծերունուն (ՀԺՀ I 1959, 27–48; V 1966 83–99): Թումանյանի մշակման մեջ այս մոտիվը խորանում է: Թագավորական այգու պահապանները մերժում են աղքատ կնոջ խնդրանքը, ով թագավորի Անթառամ այգուց խաղող է խնդրում իր հիվանդ երեխայի համար: Լուսադեմին երեխան մահանում է, և հուսահատ կնոջ անեծքը տարածվում է ոչ միայն բերքառատ այգու, այլև անհոգի ու չար մարդկանց վրա: Թագավորական այգու ծառերը փուշ ու տատասկ են դառնում, իսկ պահապան մարդիկ՝ գազաններ ու մռմռալով ընկնում են մացառուտները (Թումանյան 1949, 398–399): «Ինչ արին–չարին՝ հնար չեղավ, գազանը նորից մարդ դարձնելու: Վերջը հայտնվեց, որ հնարը միայն երգը–երաժշտությունն է» (Թումանյան 1940, 414): Եվ մինչև մարդկանց չարացած սրտերը չմեղմանան, գազանի կերպափոխված մարդը դարձվորությամբ չվերադառնա իր բանական վիճակին, Հազարան բլբուլը չի երգի, և չար փուշի վերածված երբեմնի եդեմական այգին չի կանաչի:

Հենց այդ նպատակով էլ ճամփա է ելնում հեքիաթի մշակութաստեղծ հերոսը, ով պոեզիան ու երաժշտությունը խորհրդանշող՝ խոսող ու երգող Հազարան բլբուլը ձեռք բերելու համար հաղթահարում է խոր ու մթին անտառներ, անդնդախոր ձորեր ու լեռներ, անտակ-անհատակ ծովեր: Անտառի մթությունն ու ծովի անհունությունը՝ իբրև անգիտակցականի առավել հաճախ հանդիպող խորհրդանիշներ, իրենց խորքերում թաքցնում են վտանգը: Մեզ հետաքրքրող հեքիաթների մեծ մասում թագավորի փոքր տղան, ով նախընտրում է վտանգավոր ճամփան, ծուռ է, մի քիչ խելքից պակաս, որովհետև «խոհեմը փախչում է վտանգից, բայց դրա հետ միասին զրկվում է այն բարիքից, ինչը հնարավոր չէ ձեռք բերել առանց խիզախության ու ռիսկի» (К. Юнг 1991, 109-110):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ազգագրական հանդես (1902), IX, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի:

Աղայան Ղ. (1962), *Երկերի ժողովածու*, հ. երկրորդ, Երևան, «Հայպետհրատ»:

Զաքարյան Ե., *Հիվանդության և բուժման առասպելույթը հայկական հեքիաթներում*, թեկն. ատենախոսություն, Երևան, 2011թ., էջ 155-156: Պաշտպանվել է ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտում:

Թումանյան Հ. (1940), *Երկերի ժողովածու*, հ. երկրորդ, Երևան, «Արմֆանի» հրատ.:

Թումանյան Հ. (1949), *Երկերի ժողովածու*, հ. երրորդ, Երևան, «Հայպետհրատ»:

Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետ՝ ՀԱԲ), (1983) հ.15, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԱԲ (1999), հ.19, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ.:

ՀԱԲ (2000), հ. 21, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ.:

Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետ՝ ՀԺՀ), (1959), հ. I, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

ՀԺՀ (1959), հ. II, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

ՀԺՀ (1962), հ. III, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

ՀԺՀ (1963), հ. IV, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

ՀԺՀ (1966), հ. V, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ (1979), հ. VII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ (1977), հ. VIII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ (1968), հ. IX, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ (1967), հ. X, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ (1984), հ. XII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ (1985), հ. XIII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ (1998), հ. XV, Երևան, «Ամրոց» հրատ.:

Սրվանձտյանց Գ. (1978), *Երկեր*, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Мелетинский Е. (1988), Культурный герой // *Мифы народов мира*, т. 2, Москва, с. 25-28, «Сов. Энциклопедиять.

Пропп В. (1946), *Исторические корни волшебной сказки*, Ленинград: изд-во Ленинградского государственного ордена Ленина университета.

Элиаде М. (1998), *Миф о вечном возвращении*, Архетипы и повторяемость, Санкт-Петербург: изд-во «Алетейя».

Юнг К. (1991), *Архетип и символ*, Москва: изд-во «Ренессанс».

Uther, H.–J. (ATU) (2011). *The Types of International Folktales. A Classification and Bibliography*, I, II, III, FF Communications. Helsinki, Academia Scientiarum Fennica.

Թամար Հայրապետյան

ՆՎԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԾԵՍԸ ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ԱՆՏԱՌՈՒՄ (ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Ամփոփում

Հայկական հեքիաթներում անտառը փորձությունների հաղթահարման գաղտնագիտական վայր է, որտեղ տարիքային մի խմբից մյուսն են անցնում նվիրագործյալ հերոսները: Անտառը «անդուռ–անպատուհան», «անմուտք–անելք» մի աշխարհ է: Նվիրագործյալ տղային է վիճակված հնարավորությունը դարձնել իրականություն, քաոսը հաղթահարել, երևույթներին տրամաբանություն հաղորդել, անշարժությունը դնել շարժման մեջ, նպաստել կյանքի մշտական շրջապտույտին: Մշակութային հերոսը տեսնում է ավելին, քան ողջ հանրույթը, որը գերադասում է խաղաղ, անվրդով կենսընթաց: Հենց դրանով է նրա արարքը դառնում խիզախում:

Բանալի բառեր՝ *անտառ, բլբուլ, հերոս, մշակույթ, վտանգ, խիզախում, ծես, նվիրագործում, թագավոր, քաոս:*

Тамар Айрапетян

ОБРЯД ИНИЦИАЦИИ В СКАЗОЧНОМ ЛЕСУ (НА МАТЕРИАЛЕ АРМЯНСКИХ ВОЛШЕБНЫХ СКАЗОК)

Резюме

В армянских сказках лес является особым пространством, где герой преодолевает препятствия и проходит инициацию. Лес является «иным» миром «без окон без дверей», «без входа и без выхода», а нахождение в таком священном лесу воспринималось как пребывание на «том» свете. На долю героя выпадает возможность преодолеть непреодолимое, подчинить себе хаос, дать логическое обяснение явлениям и стать частью целого. Культурный герой сказки видит больше, чем остальные и именно поэтому его поступки воспринимаются как «деяния».

Ключевые слова: *лес, жар–птица, герой, культура, опасность, храбрость, ритуал, инициация, царь, хаос.*

Tamar Hayrapetyan

THE RITE OF INITIATION IN FAIRYTALE FOREST (ON THE MATERIAL OF ARMENIAN FAIRYTALES)

Summary

In Armenian fairy tale tradition the forest is often presented as an allegory. It leads to a possible world where cause and effect relations are disturbed. The forest is a possible world, where the hero must face tasks and trials. He spends a day in a forest as if gaining energy and power from nature and is ready to overcome difficulties and adopt new cultural values. Now he can do more than other people and that is the reason he is perceived as courageous.

Key words: *forest, firebird, hero, culture, danger, bravery, initiation, rite, king, chaos.*